II 7/49
4шр

Սերեբր
84

Դաշտ
1853

II 7/49
Սերբ
Ց4
282
4-14
2002
16922

ԿԱԹՈՂԻԿԷ

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅՈՑ

ՏԱՌԱՊԱՆՔԸ

ՀԱՄՈՒՆ ԳԵՐԱՊԱՅԾԱՌՆ

ՀԵՌՕՔ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1853 —

239

(23559-60)

(4340 41)

4883

84-2001

39883-ա

ԿԱԹՈՂԻԿԷ

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅՈՑ ՏԱՌԱՊԱՆՔԸ

ՀԱՍՈՒՆ ԳԵՐԱՊԱՅԾԱՌԻՆ

ՁԵՌՕՔ

«Ի՛նչ ամօթ անոնց որ բաղմութեան կիրքերը բարեկարգելու պաշտօնը ունին՝ իսկ իրենք՝ իրենց սեփական կիրքերուն անարգ խաղալիք մը կ'ըլլան . . . Ժողովրդեան բարքը կանոնաւորելու պարտականութիւնը ունին՝ և սակայն կը խանգարեն զայն . առաքինութեան պաշտպան ըլլալու համար հաստատեց զանոնք Աստուած՝ բայց իրենք՝ մոլութեան թիկունք ու օրինակ կ'ըլլան։

ՄԱՍԻԼԼԵՕՆ

Կաթողիկէ Հայոց եօթը տարուան շփոթը, ըսը զանազան պարագաներ մինչեւ ի խառնուրդիւն հասուցին, ինչպէս ծագեցաւ, ինչո՞ւ սաստկացաւ և ինչ՞ հետեւութիւն ունեցաւ։ Այսպէս են այն խնդիրները որ մեր կամացը ներհակ պարտաւորեցանք նկարագրել, հրատարակել ու խոհական միտք և ուղիղ սիրտ ունեցող մարդկան դատաստանին յանձնել։

Յիրաւի մինչեւ հիմայ քիչ մը գրով և քիչ մ'ալ բանիւ բաւական ճանչցուած էին վշտացեալ

ժողովրդեան իրաւունքները, որով գուցէ գոհ եղած կրկին և որոշ հրատարակութեան մը չէ՞նք դիմեր և մենք։ Թէ և Եպիսկոպոսապետ մը և Օրայրագոյն Վարդապետք Խոպերէն պիղծ տետրակով մը մեծ մեծ ըղպարտութեամբ ղաշխարհ գայթակղութեամբ լեցընելու չի զարհուրեցան. այսու ամենայնիւ մենք, մեր իրաւամբը, չէ՞նք ուզեր քրիստոնեայ և ուղղափառ անուն ունեցող եկեղեցականաց մէկ մասին անիրաւութեանցը, թշնամութեանցը և ազգիս վրայ հասուցած աղէտիցը արձագանքը ըլլալ, 'ի պատիւ քրիստոնէութեան և 'ի պատիւ ընդհանուր դղերին։ Սակայն հակառակորդք ժողովրդեան համբերութիւնը չարաչար գործածելով, և մեր լռութիւնը իրենց պատեհ առիթ մ'ըլլաց՝ սկսան քանիւ և դրով, և անշուշտ ծածուկ նպատակաւ մը, Գաղղիերէն օրագրի մը նպատիւք ամէն կերպ ստութիւններ, անվայել զրպարտութիւններ հաւաքել դիզել անմեղ ժողովրդեան մը վրայ, և իրենց սովորական զէնքերը ձեռք առած՝ չամչցան մինչև հաւատոյ և տերութեան թշնամին ձևացընել զայն։ Այսպիսի ամբաստանութեանց առջև համբերութիւնը չէ թէ միայն անկարելի՝ այլև վնասակար. վասն որոյ ստիպուեցանք փարատելու լռութեան քողը, և բարձրացնելու մեր ձայնը, ոչ թէ վրէժխնդրութեան հոգւով, այլ մեր հակառակորդաց ամբաստանութիւնները ջնջելու, թէ որ

իրենց հաւատացող կայ նէ դէռ։ Պարտակա-
նութիւն մըն է այս՝ զոր կը փութանք կատարելու
առանց ակնածութեան, վասն զի ազգիս պատի-
ւը կը պաշտպանենք. և առանց երկիւղի, վասն
զի ճշմարտութիւնը ունինք մեր կողմը. արդ մը,
որուն առջև ստութեան խաւարը փարատելով՝
մէջի ապաստան ըլլողները յաւիտեան խայտա-
ռակ կ'ըլլան։

ՀԱՅ ազգին հանդարտ ու խոհեմ բնաւորու-
թեանը ծանօթ մարդիկ վկայ են՝ որ այսպիսի ժո-
ղովուրդ մը չի կրնար յանկարծ իւր ընթացքէն
խոտորիլ մինչև մեծ վնասներ կամ վտանգք չի
ստիպեն զինքը։ Մէկ է այն որ իր վնասին և կո-
ծրատեանը պաղ արիւնով մը հանդիսական ըլլայ։
Ազգիս վրայ հասած թշուառութիւնը ցնորք է,
ճշմարիտ է. ժողովրդեան խռովութիւնը իրա-
ւամբ է, անիրաւ է. ճշմարտութիւնը Հասուն
Պերապայծառին կողմն է թէ ժողովրդեան, մինչև
ցայսօր պատահած դէպքերը յայտնի կը ցուցը-
նեն։ Բայց այս օրուան ազգային ամէն խռովու-
թեանց բուն պատճառը ազէկ հասկնալու հա-
մար իրենց սկիզբը պէտք է դիտել։

Սկսիլ հարիւր յիսուն տարի առաջ, մեր
խեղճ ազգը տգիտութեան թանձր խաւարովը
պատեալ, կեղծ կամ անհմուտ ղեկավարներու
ձեռքը ինկած նաւու մը նման, ալեկոծ ծովերու
մէջ սաստանելով, ո գիտէ որ սաստիկ հովին ա-

ւարը պիտի ըլլար, երբ, անշուշտ Աստուծմէ ազդեալ զօրութիւն մը յանկարծ հասնելով, ամուր ձեռքը բռնեց, կեցուց ազդային նաւը՝ կորստեան վէին բերանը։ Այս զօրութիւը ՄԵԾՆ ՄԽԻԹԱՐ էր։ Սակայն, այն նաւը անվնաս նաւաստիները հասցնելու համար երկար ժամանակի ու ճարտար նաւաստիներու կարիք էր. վասնզոյց ամէն դժուարութեանց յաղթանակելով հաստատեց Մխիթար իւր Մենաստանը, և զարմանալի հանճարով մը զարգացոյց։ Նաւուն մէջն հին նաւաստին մէկ մասը Մխիթարայ նը-պատակը գուշակելով, հասկցաւ որ օր մը այն Ընկերութեանը ծոցէն ճշմարտութեան ու գիտութեան լոյսը ծագելով ազգային նաւուն վրայ, փարատի պիտի խաւարը և աղատի ձեռքին տակի տաւարը։ Գրգռեցաւ նախանձը, ուամէն իր ուժովը զինեցաւ Մխիթարայ դէմ. և անոր հրաշալի շէնքը կործանելու մոքով այնպիսի թշնամութեան ու ատելութեան հիմ մը դրաւ՝ որ տարիներէ վերջը ժողովրդեան մէջ տարածուելով անհամար չարեաց պատճառը եղաւ։ Այսպէս է Մխիթարեանց դէմ քանի մը Բոլշեվիցոց անհաշտ թշնամութեան սկիզբը և պատճառը որ կը յարատևէ մինչև ցայսօր։ Բայց Մխիթարայ Մենաստանը երթալով ծաղկեցաւ, և իր բարիքներովը ազգիս սէրը առաջաւ։ Թշնամին, ժողովրդեան դէպի Մխիթարեանց դիմելը տեսնելով, ինքն ալ սնոնց գովելի ճամբան բռնա-

նելու տեղ, իւր տգէտ ու ազգատեաց շաւղէն առանց խոտորելու, թշնամութիւնը սատկացուց. որով ժողովրդեան սրտին մէջ՝ իրեն դէմ ատելութեան որոմը ցանեց։ Որչափ ինքը զայրացաւ՝ այնչափ ժողովուրդը իրմէ խորշեցաւ։ Ուստի բոլոր ազգը Մխիթարեանց դէմ յարուցանելու համար նոր զէնքեր թափեց։ Մէկ կողմէն իբրև հերետիկոս Հռոմայ մատնեց զնրանք. մէկալ կողմէն տգէտ ժողովուրդը դրդռեց անոնց դէմ կերպ կերպ զրպարտութիւններ ստեղծելով։ Այսպէս յարատևեց հարիւր երեսուն տարի միակերպ։ Ոչ Հռոմայ մէջ կորսնցուցած դատերէն վհատեցաւ. ոչ պապերուն Մխիթարեանց տուած այլ և այլ կնդակներուն համոզեցաւ. ոչ գայթակղութենէ ամչցաւ. ոչ ազգին վրայ հասուցած զանազան չարիքներէն սոսկաց։ Այնչափ աշխատեցաւ՝ մինչև վերջապէս անմեղ ժողովուրդ մը, արք և կանայք ու փափուկ մանկտին առ հասարակ Աբիոյ ձիւնապատ լեռներուն վրայ աքսորեալ, իրենց հարստութեամբը, իրենց արիւնովը տուժեցին բոլոր այդ անօրէնութիւնները. երբ, բուն պատճառը ըլլալով Հռոմ ապաստանելով, հոն հանդիստ սրտիւ ժողովրդեան վիշտերուն հանդիսական կեցած՝ այն երջանիկ օրուան կ'ըսպասէին, ուր, ժողովուրդը դիւցազնաբար ազատելով դառնայ իր հայրենիքը, հիմնէ իւր ազատ ազգութիւնը, որպէս զի և իրենք ինչան դարձեալ իրենց կողոպուտին

վրայ ու մէկ կողմէն համարձակ զաղդը կեղեքէն, և մէկալ կողմէն իրենց հին թշնամութիւնը կա-տաղաբար նորոգէն։

Յիշեալ սոսկալի դէպքերէն հակառակորդաց մէկ քանին զգաստանալով ուղղեցին իրենց վար-քը. սակայն մէկալնոնք հին թշնամութեան կը-բակը մնուցին միշտ իրենց սրտին մէջ, բայց ծա-ծուկ։ Վերհատառ Մահմուտ Կայսեր հրովար-տակովը իւր աղատութիւնը ստանալէն վերջը, ժողովուրդը, ասոնց առ երեսս հաշտուիլը ան-կեղծ կարծելով՝ մոռնալ ուզեց բոլոր այն վիշ-տերը ու վնասները որ իրենց պատճառաւը կը-րեր էր. և բարեկամ, թշնամի ամենուն առ հա-տարակ ձեռք տալով՝ իւր այն խեղճ վիճակին մէջ եկեղեցիներ կանգնեց, հիւանդանոց ու աղքատանոց շինեց, պատրիարքարան հաստա-տեց, եկամուտներ որոշեց ու այսօր ղինքը քա-մահրողները առատաձեռնութեամբ հարբստա-ցուց. և ինքը՝ սիրով ու խաղաղութեամբ՝ քիչ ատենուան մէջ իր առջի վիճակը դերազանցեց։ Վերջապէս եկեղեցական ու աշխարհական օտար աղգաց ու կրօնից առջև բարեկարգութեան գո-վելի օրինակ մը եղան. ղի թշնամութեան հոգին թէ որ բոլորովին անյայտ եղած չէր ալ նէ՝ գո-նէ գլուխ վերցնելու չափ համարձակութիւն ալ չունէր. վասն ղի փորձառու, առաքինի և ճշմարիտ հովիւներ կը կառավարէին զաղդը, ո-րոնք եկեղեցական իրաւանցը հետ աղգային կա-

նոններուն ալ անխտիր պաշտպան կեցած, ոչ կողմ կը ճանչնային ոչ մաս, ոչ քալէՀցի կը ճանաչէին ոչ աբբայի, ոչ պօլսեցի, ոչ գաղատացի. այլ ամենն ալ իրենց հաւասար որդիքն էր, վասն որոյ իրենք ալ ամենուն սիրելի հայր էին։ Բաղցրութիւն և արդարութիւն կար մէկ կողմէն, հաճութիւն, հնազանդութիւն մէկալ կողմէն. սէր և խաղաղութիւն ամենուն մէջ։ Այսպէս կառավարեցաւ ազգը տասնը հինգ տարիի չափ միջոց. և որչափ արդեօք երջանիկ պիտի ըլլար այսօր թէ որ յարատևէր այն բարեբաղդ վիճակը։ Աքիսոն, Նուրիճան և Մարուշ երկու ճշմարիտ հովիւներուն հետ մէկ տեղ Թաղուեցաւ և ազգիս խաղաղութիւնը. վասն զի շահասիրութիւն և փառասիրութիւն յաջորդելով այն առաքինի Նախագահներուն, նախանձ ու թշնամութիւն, ղրպարտութիւն ու մատնութիւն գլուխ վերուցին և յարատև խռովութեանց և աղէտից տխուր տեսարան մը ձևացուցին ազգը։ Այսպէս է ազգիս եօթը տարեկան վիճակը որ Հասուն նախագահին հետ սկսաւ և երթալով սաստկացաւ։

Առաջին խաղաղասէր երկու հովիւներուն կառավարութենէն տժգոհ, և Մխիթարեանց վանքին հետ մէկ տեղ ազգիս հաղար հինգ հարիւր տարուան արարողութիւնները, ծէսերը, կանոնները տակն ու վրայ բերելու դիտաւորութիւնը մտքին մէջ ամուր հաստատած և նախագահու-

թեան հետամուտ պարզ քահանայ մը, բնիկ հայ թէ ոչ՝ չեմք գիտեր, իւր ծածուկ խորհուրդները ժամանակով գործքի դնելու համար հընդարձակ գաւառ նախ՝ նախագահի քարտուղար անուանելու զինքը, որուն միջոցովը դիւրութեամբ ազգային ամեն գործքերուն տեղեկանալով՝ Հռոմայ պաշտօնատեարց մէկ քանին իրեն մտերիմ բարեկամ ստացաւ, և վարպետ ընթացքով մը Մարուշ Նախագահին ու ազգիս եկեղեցական և աշխարհական քանի մը երեւելիներուն սիրտը շահեցաւ. և յետոյ ասոնց հաւանութեամբը նախագահի օգնիչ ընտրուելու պատճառանօք Հռոմ երթալով եպիսկոպոս ձեռնադրեցաւ. սակայն այսչափով առանց գոհ ընտրուելու, չեմք գիտեր ինչ միջոցներով, ինչ իրաւունքով և ինչ օրէնքով ազգէն գաղտնի Նախաբահին յաջորդելու կոնդակ մ՚ալ առաւ և այնպէս վերադարձաւ, ու իր քովը ծածուկ պահեց զայն մինչև այն օրը որ, ինչպէս հրապարակաւ կը հաստատեն, ծերունի Մարուշ Նախագահը ասոր ընթացքէն զգաստանալով ու ազգիս ապագայ խնդիրներնը գուշակելով, սրտին ցաւէն յանկարծամահ եղաւ։

Հայոց հին սովորութիւնը և ազգիս կանոնները կը պահանջեն որ նախագահի ընտրութիւնը գղերէն, աւագանիէն ու ժողովրդեան գլխաւորներէն բաղկացեալ ժողովքով մ՚ըլլայ, քուէարկութեամբ։ Այս կանոնով ընտրուած էին

առաջին երկու հովիւները զորոնք հաստատեր էր Հոմ։ Դարձեալ այս անգամ երրորդ նախագահին ընտրութեանը համար հաւաքելով քուէարկուք Յիսուս Քրիստոս մայր եկեղեցեաց մէջ, հոն իմացան յանկարծ բանին գաղտնաբար արդէն լմնցած ըլլալը։ Այս ըսելը շուտ մը տարածուելով զարմացուց խռովեց ժողովուրդը. վասն զի Նախագահի ընտրութեան կանոնը որչափ աղէկ ու որչափ օգտակար ըլլալը երկու անգամ փորձով հաստատուեր էր. այս անգամ նոյն կանոնէն զարտուղիը կրնար աղէտաբեր ըլլալ. վասն որոյ դժուարացաւ ազգը այն անարժան միջոցին, որով Հասուն գերապայծառը ազգային հին սովորութիւնը և կանոնը ոտքի տակ առնելով՝ օրինազանցութեան չար օրինակ մը տուեր էր ամենուն. և ընդդիմացաւ անոր ընտրութիւնը, և ոչ երբեք պիտի ընդունէր զայն իբրեւ Նախագահ՝ թէ որ վախճանեալ ազգապետը Յակոբ Ճէլէպին, խաղաղութեան հոգւով շարժեալ, չի յորդորեր, չի համոզեր ժողովուրդը նոյն ժողովքին մէջ որուն խօսքին զիջաւ բազմութիւնը։ Հասուն գերապայծառը կանոնազանցութեան վրայ հիմնած այս իշխանութիւնը միացոյց Պատրիարքական իշխանութեան հետ, զոր վարպետութեամբ մը ստացեր էր արդէն իր գաղտնի նպատակը դիւրացնելու համար։ Այս բարձր պաշտօնները ձեռք ձգելէն վերջը, գոնէ խոհեմ և անկողմնասէր ընթացքով մը ազգիս մեծ մա-

սին սրտին մ.Ջ ցանած ատելութեան որոմը ջնջելով ամենուն սիրտը շահելու տեղ՝ ընդհակառակն՝ իր դիտաւորութիւնը ի գործ դնելու համար ցուցցած հակառակութիւնները ամենուն սրտին ատելութիւնը սաստկացուցին։

Գերապայծառին ընտրութենէն քիչ մը վերջը, քանի մը ազգասէր անձինք՝ Եւրոպիոյ զանազան Ընկերութիւններէն խրախոյս առած՝ իրենց աշխատութեամբը ընկերութիւն մը հաստատել ուզեցին ազգիս մանկտուցն բարոյական և ուսումնական կրթութեանը համար, ըստ որում ամեն բանէ աւելի և առաջ դպրոցներու կարօտ է ազգը։ Այս Ընկերութեան կանոնները Հասուն գերապայծառին մատուցանելով զանոնք ապագրութեամբ հրատարակելու հրամանը խնդրեցին։ Պատրիարքը գերապայծառը մոքին ծածուկ խորհուրդը կեղծելով, փուճ ու մուճ պատճառանօք օրէ օր, շաբթէ շաբաթ կ'ուշացնէր հրամանը, մինչեւ Ընկերութիւնը հիմնող անձինք հասկնալով անոր միտքը պարտաւորեցան իրենք իրենց ապել և հրատարակել այն կանոնները։ Գերապայծառ Պատրիարքին հաճոյ չեղաւ այս գործը, և ազգիս ամեն յառաջադիմութիւնը արգիլելու համար սկսաւ Ընկերութիւնը խափանելու հնարք բնտռել։ Մէկ կողմէն ժողովատեղին անդամոց առջեւ գոչելու կ'աշխատէր, մէկալ կողմէն, խուշրացոյցը աչքին դրած աշխարհիս լուգիրները կը զննէր, կը քննէր ամեն օր,

որպէս զի յարմար կամ անյարմար, իրեն կամ մոերիմներուն վերաբերեալ գրուածք մը տես-նելով՝ Համազգեաց ընկերութիւնը ամբաստա-նէ իբրեւ հեղինակ այն գրուածքին։ Այսու ա-մենայնիւ կը ծաղկէր Ընկերութիւնը և օրէ օր կը բազմանային անդամները։ Տարի մը չի քշեց՝ և մայրաքաղաքիս, և գաւառներուն, և մինչև օտար երկիրներու մէջ բնակող երեւելի և պատ-ուելի անձինք անդամ եղան, որոնց օժանդա-կութեամբը քարաշէն ժողովարան մը ստացաւ ընկերութիւնը, և գուցէ քիչ առենէն դպրոց մըն ալ կը կանգնէր թէ որ կատաղի թշնամութի մը խոչնդոտ չըլլար իրեն։

Համազգեաց ընկերութեան այս յառաջադի-մութիւը գրգռեց զգերապայծառը և իւր դպրո-ցական մոերիմները, որոնք սրտերնուն ծածուկ խորհուրդը դուրս թափելով յայտնի մաքառիլ սկսան ընկերութեան դէմ. մանաւանդ սատա-կացուցին իրենց թշնամութիւնը, երբ ազգիս յառաջադիմութեանը հղօր պաշտպանաց գրչասա-ւորը՝ յանկարծ յափշտակեց անգութ մահը 'ի սուգ համօրէն ազգին։ Համազգեաց ընկերու-թիւնը կործանելու համար ազգու զէնք մ'ունէ-ին հակառակորդք, իրենց նախնիքներէն մնացած, անվայել մարդկութեան, անվայել քրիստոնէ-ութեան։ Ոչ հերետիկոսութիւն թողուցին, ոչ անհաւատութիւն, ոչ սրիկայութիւն որ չի դիպչեն ընկերութեան անդամոցը վրայ, մինչեւ

խոստովանանքի արձակումը անգամ արգելեցին իրենց, և իբրեւ ապատամբ սէրուԹեան մատնեցին. և քիչ մնաց որ չամբաստանեն ԸնկերուԹիւնը իբրեւ պատճառ և յուղիչ Պաղլիոյ, Պերմանիոյ և Իտալիոյ խռովուԹեանց։ Այս անվայել ամբաստանուԹիւններէն զզուելով, և առանց վախճան մը տալու փուԹով վերհափառ Աբբային դիմելու հարկադրեցաւ ժողովուրդը, որուն խնդրոյն համեմատ աբբուհի քնիչ մը ներկայացաւ պատրիարքարան ուր հաւաքեալ էին Նախագահ ու Պատրիարք դերապայծառը, աւագանին, ժողովրդեան գլխաւորները և ԸնկերուԹեան երեսփոխանք։ Հոն Հասուն դերապայծառը, մանրամասն քննուԹեամբ կանոնները որը սրբագրեց, որը փոխեց ըստ իւր հաճոյքը, և այնպէս աբբուհի պաշտօնատիրոջ հետ ինքն ալ ընդունեցաւ, հաստատեց և օրհնեց ընկերուԹիւնը իբրեւ կատարեալ և օգտակար գործք։ Ով կրնար խորհիլ թէ Յուդային համբոյրը պիտի ըլլար այն։ Յիշեալ ժողովքէն քիչ մը վերջը, յանկարծ Հռոմէ եկած նամակի մը հրատարակուԹեամբ, դերապայծառը՝ ընկերուԹիւնը հաւատոյ դէմ և կասկածելի ցուցնելով ստիպեց զաղգը հեռանալու այն ԸնկերուԹենէն զոր քիչ մը առաջ օրհներ էր։ Զարմանալի և անմեկնելի գործք։ Թէ որ վնասակար էր ԸնկերուԹիւնը, դերապայծառը ինչու ընդունեցաւ զայն։ ԱնԹէ եպիսկոպոսապետ մը այսպիսի

պարզ գործքի մը վնասը և օգուտը չի կրցաւ արդեօք որոշել. սակայն այսչափիս կարողութիւն չունեցող նախագահը պէտք է կարծեմք հրաժարի իւր աթոռէն։ Իսկ թէ որ ընկերութեան օգտակար կամ գոնէ անվնաս ըլլալը ճանչնալով ընդունեցաւ և օրհնեց, ինչպէս ուրեմն վերջը առանց խղճի խայտառակել ուզեց զայն, ջնջել, և ընկերութեան բառը անգամ ատելի ընել ժողովրդեան սրտին։ Մինթէ եպիսկոպոսի մը արժանի գործ է այդ։ Այսպիսի լուսաւորեալ դարու մէջ ինչ սիրոյ և ինչ պատուոյ արժանի է այն որ իւր հակառակութեան հոգին հաճելցընելու համար քաղաքական ու հոգեւոր կառավարութիւններէ քննուած ընկերութիւն մը կործանելու համարձակի։

Համազգեաց ընկերութեանը հետ անշուշտ ուսման ու գիտութեան շաւիղը անգամ ազդէս ջնջել ուզելով գերապայծառը՝ ուր դպրոց մը տեսաւ, ուր դաստիարակ մը, ուր գրուածք մը արծուենման վրայ հասնելով, որը խափանեց, որը ցրուեց, որը դատապարտեց, որին ալ գոնէ ամիս մ'ըլլայ, մատուռը գոցեց։ Այսն ալ ուսումնականութիւն և իւր նպատակները չէին կրնար համաձայնիլ, պէտք էր մէկը ջնջել։

Հայր Պետրոս Մինասեան Մխիթարեան աղգասէր ու բարեկրօն վարդապետը, Տրապիզնի Համազգեաց խեղճ վիճակին նպաստ մ'ընելու փափաքով, առանց ազգին ծանրութիւն ըլլալու,

քարաշէն դպրոց մը հաստատելու ձեռք զարկաւ տեղացւոց հաճութեամբը։ Այս կրթութեան տեղին, Հ. Պետրոսին անխոնջ աշխատութեամբը յառաջանալ սկսաւ, ու մեծ մխիթարութեան նիւթ մը եղաւ ժողովրդեան որ անհամբեր ընթանալուն կ'սպասէր։ Սակայն իր փափաքը տեղի չի գտաւ. վասն զի ազգային յառաջադիմութիւնը թշնամին վրայ հասաւ իւր հին զէնքովը, ամէն կերպ զրպարտութիւն բարդեց վարդապետին վրայ, պատարագէ արգիլեց, Հռոմայ ամբաստանեց, Դոան մատնեց, վերջապէս ամէն գայթակղական միջոցը բանեցուց մինչեւ խեղճ քահանայն, աչքերնուս առջեւ, մարտիրոսի մը չափ չարչարուելէն վերջը սպանուեցաւ, ազգին սիրոյն համար իւր քրտամբը ըսկըսած աշխատանքը կիսկատար երեսի վրայ թողուլ՝ ու արցունքներովը թրջելով զայն հրաժարիլ քաշուիլ իւր վանքը 'ի վնաս մանկտւոյն և 'ի սուգ համօրէն տեղացւոց։ Այսպիսի սոսկալի գործողութեանց առջեւ մարդկային ազգը ինչպէս չի խռովի։

Այրաքաղաքիս բնիկ ընտանիքներէն, և աղգասէր ու բարեկարգ ընթացիւք ազգին սերը գրաւող, և քաղքիս մանկտւոյն կրթութեանը պարապող Մխիթարեաններէն չորս անձինք իրենց անուամբը Հռոմ ամբաստանելով՝ վանքերնին քաշուելու հարկադրեց զիրենք Հասուն գերապայծառը։ Ինչ էր ասոնց յանցանքը. չեմք

գիտեր, բայց բոլոր աղէտը վկայ է որ անատգիւտ էր իրենց վարքը, ժողովուրդը չէին դարձեր, չէին նախատեր, ու իրենց կիրթ ու գիտուն և պարկեշտ վարմունքը՝ իրենց թշնամեացը կոպիտ ու գայթակղելի ընթացքը կը խայտառակէին. գուցէ ասոնք ըլլան իրենց յանցանքը. վասնորոյ՝ այն օգտակար անձինքը պարտաւորեցան թողուլ իրենց հայրենիքը և հրաժարիլ ազգէն 'ի տրըտմութիւն ժողովրդեան, և 'ի սուգ իրենց սիրելի ընտանեացը։

Գերապայծառին բոլոր այս գործքերը ժողովրդեան սիրտը կը վիրաւորէին և ձեռքի տակէ պատրաստուող ապագայ ամեն դժբաղդութիւնները շատերը կը գուշակէին։ Վասն որոյ ասոր դարման մը ընելու փութով՝ Գերապայծառին նախագահական ու պատրիարքական կրկին իշխանութիւնները զատելու ոտք ելան, որոնց միացաւ գրեթէ բոլոր աղգը. և արքունի հրամանով մը առին Հասուն Գերապայծառին պատրիարքութիւնը և Սէվիլեան Յովհաննէս վարդապետին յանձնեցին զայն, յուսալով որ նոր պատրիարքը ամուր ձեռօք կը պաշտպանէ աղգիս բոլոր իրաւունքները։ Եւ ապագայ ամեն դըժբաղդութիւններէն բոլորովին ազատելու փափաքով ազգային ժողովք մը կազմելու և խափանեալ կանոնները հաստատելու համար աղերսագիր մը մատուցին Վեհափառ Կայսեր որ իւր սովորական գթովը հաղորդեց իսկոյն։ Ժողո-

(23559-60) 1692 (4340 41) 84-2001

վուրդը առանց ժամանակ կորսնցնելու՝ Կայսերական հրովարտակը կատարելու ձեռնամուխ ըլլալով հաստատեց ազգային ժողովը, որուն առաջին գործը եղաւ ազգիս հին կանոնները քննել ու նորոգել, որպէս զի վերջը Տէրութեան ներկայացնելով հաստատէ զանոնք։ Ազգիս մէջ դրուելու կարգ ու կանոնը, և ապագայ հանդիստութեան և յառաջադիմութեան յոյսը և ուրախութիւնը՝ երկար ատեն չի տևեցին։ Ազգային ժողովը և կանոնադրութիւնը իր նպատակին զէն ու վնաս համարելով Պերապայծառը՝ զանոնք խափանելու զինեցաւ։ Նախ վարպետութեամբ Սէրվիան Պատրիարքը համոզեց, և յետոյ, իւր մտերիմներուն ձեռքը, այն կանոնները հաւատոյ դէմ ցուցնելով ընդդիմութիւններ դժուարութիւններ հանեց, ժողովականաց մէջ տարաձայնութիւն ցանեց, վերջապէս այնչափ ըրաւ որ օրէնսդիրները ձանձրանալով հրաժարեցան, և այսպէս ժողովքն ալ, կանոնները ալ երեսի վրայ մնացին։ Այսն որոյ ժողովուրդը իրաւամբ սրտմտեցաւ, և օրէ օր ազգային եկամուտները պակսելով խեղճութիւն խեղճութիւն վրայ սկսաւ դիզուիլ։

Ազգիս ամէն իրաւունքները խափանելով, իր խորհրդոցը արդելքներուն մէկ մասը վերցնելէն վերջը, Պերապայծառը, իւր իշխանութիւնը տարածելու փութայ։ Նախ՝ հաւատարիմ օգնականներ ունենալու մտօք քահանայացու նորընտ

ծայից խումբ մը հաստատեց, որոնք անշուշտ Մխիթարեանց յաջորդելու կը պատրաստուէին. սակայն ժողովուրդն ալ խիստ քիչ միտք ունէր զանոնք Մխիթարեանց նախադասելու։ Այս յետոյ, իրեն հպատակ գաւառական եպիսկոպոսներ ձերնադրելու ձեռք զարկաւ. բայց ոչ աղդին հաճութիւնը առնելու հոգ ըրաւ, վասն զի գիտէր որ ազգը իր նպատակին ծառայող անձինքը չէր կրնար ընդունիլ. և ոչ անկողմնապահ հոգւով մը շարժելու փութաց, որով ամեն մասեկեղեցական ու ժողովուրդ գոհ կ'ըլլային։ Այլ իւր ընտրութիւնը դպրոցականաց մասէն ըրաւ միայն, և այն՝ իր մեծ բարեկամներէն և մտերիմներէն, որոնց գիտութիւնը, կրթութիւնը և ազգասիրութիւնը անծանօթ էին ժողովրդեան։ Ազգէն գաղտնի այս կերպ ընտրութիւնը ծանր եկաւ արդէն խռովեալ ժողովրդեան սրտին որ զայն արգիլելու փութաց. վասն զի անկանոն ընտրութեան մը որչափ աղէտաբեր ըլլալը՝ իր վրայ փորձով հաստատած էր արդէն, և չէր ուզեր որ Ասիոյ խեղճ համազգիք ալ իր աղէտիցը մասնակից ըլլան։ Հասուն Գերապայծառը՝ ժողովրդեան արդար տրտունջին առանց ականջ տալու, իւր կամքը ամեն արգելքէ աղատ կատարելու համար զարմանալի դիւտ մը հնարեց, որ չեմք գիտեր որ ազգին մէջ պատահած է նը մանը։ Յորեկուան լուսին մէջ հրապարակաւ և վկայութեամբ ըլլալու գործողութիւնը՝ ծա-

ծուկ և անյայտ դիշերուան խաւարին մէջ կա-
տարեց. և յանկարծ առաւօտ մը առանց վկայի
եպիսկոպոսունք տեսնուեցան փողոցներու մէջ։
Ընչուշտ հանճարաւոր մարդը՝ ինչպէս գիտու-
թեան խաւարէն՝ նոյնպէս և գիշերուան մութէն
շահ կը քաղէ. սակայն քրիստոնեայ ժողովուրդը
կը խորշի այսպիսի անպատեհ միջոցներէն։

Յիշեալ եպիսկոպոսունք իրենց թեմը երթալով ինչ օգուտներ ըրին իրենց ժողովրդոցը չիմացանք դեռ. սակայն ասոնց մէկ քանիին ընթացքը զարմանալով կը կարդամք կոր հոս քանի մը հաւատարիմ նամակներու մէջ. նաև ասոնց մէկուն դէմ ժողովրդեան մեծ գանգատներուն և տժգոհութիւններուն արձագանքը մինչև Ամբունի դուռը ազդեց։

Հասուն գերապայծառին ձեռնամուխ եղած բոլոր այս գործքերը, և իւր տնական ծախքը, և յարատեւ ճամբորդութիւնները, և շնորհած պարգեւները, և քահանայու նորընծաներ և մայրապետներ աճեցնելու համար կանգնած մեծ շէնքերը ծանր գումարներու կարօտ էին։ Ազգէն ունեցած իւր օրինաւոր եկամուտը՝ ըրած ծախքին և ոչ քառորդին կը բաւէր. իսկ մնացածը լեցընելու համար անշուշտ նոր գիւտերու դիմել հարկ էր։

Հաղար հինգ հարիւր տարուան հին ծէսերը նուս նոր սովորութիւն մը յարելով գերապայծառը՝ Խարոչէա անուամբ քահանաներու խումբ

մը հաստատեց ամեն տեղ, իր մոերիմներէն բաղկացեալ, որոնց գլխաւոր գործն էր հոգեւարքներու քով վերջին հոգևոր գործողութիւնները կատարել, և ըստ տեղւոյն և ըստ վիճակին կտակին շինել։ Այսոնց մէջէն շատ անխղճմտանք մարդիկ իրենց պաշտօնը չարաչար վարելով, սկսան հիւանդին մեղքերուն հետ մէկ տեղ բոլոր հարստութեանն ալ վերջին արձակումը տալ. մինչեւ հասկցաւ ժողովուրդը որ այս կերպ անխիղճ բարոքեանները պաշտօնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ ամեն ընտանիք իւր ծնողացը և ազգականացը ժառանգութենէն զրկել, մանաւանդ անանկ ընտանիքները որոնց քով աւելի համարձակութեամբ կը վարեն իրենց զբաղուելի պաշտօնը և երբեմն այնպէս բռնութեամբ և անողորմաբար մինչեւ անգամ ազգային պատրիարքարանը վկայ է անոնց գանգատանացը և հեծութեանց։ Այս անիրաւ եկամուտներուն վրայ չեմք ուզեր յաւելցնել ոչ օրինաւոր իրաւանց ծանր ծանր գիները, և ոչ առանձնական տուգանքները. բայց չեմք կրնար զանց առնել պատրիարքարանին այն վիթխարի պարտքը որ չեմք գիտեր ինչպէս աճեցաւ քանի մը տարուան մէջ. այն տուրքերը և շնորհները որ կը վճարէ ժողովուրդը իբրեւ իրաւունք աղքատաց առանց գիտնալու թէ ուր կ'երթան կոր. այն օրական եկամուտները ազգային եկեղեցեաց որոնց հաշիւը ոչ ոք գիտէ. վերջապէս այսչափ տարեկան

այն պարզեւեալ տուները, խանութները որոնք անթափանցելի գաղտնիքներ են դեռ ժողովրդեան համար։ Բոլոր ասոնք չեն զարմացներ մեզ վերոյիշեալ մեծ մեծ ծախքերուն յաջողութեանը վրայ. սակայն ասոնց ամենը ժողովուրդը կը տուժէ կոր առանց պզտիկ օգուտ մը քաղելու։

Այսպէս գերապայծառը իր նպատակին օգնիչները և եկամուտները պատրաստելէն վերջը, երկու տարեկան հանդարտութեանը մէջ, իւր ահագին խորհուրդը գլուխ հանելու համար պէտք եղած կարգադրութիւնները ըրաւ։ Եկեղեցական, աշխարհական, կանանի, մանկոյի առհասարակ կոյր և խուլ բազմութեան խումբ մը ձեւացնելով հոգւոյ և հարստութեան ինքնահրաման տէր ըլլալ, այսպէս էր գաղտնի իր խորհուրդը զոր 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր իւր ձեռնամուխ եղած բոլոր գործքերը աղէկ յայտնեցին։ Սակայն այս անգործադրելի խորհուրդը գործքի դնելու համար պէտք էր նախ մեացած արգելքներն ալ կատարեալ ջնջել, որոնց գլխաւորը Աբբայի վանքն էր։ Այս մասին, իւր նախնեացը հարիւր յիսուն տարուան անօգուտ փորձերը յիշելով, այս անգամ այն հսկային կործանումը յաջողութեամբ գլուխ հանելու համար արտաքոյ կարգի միջոց մը բնտռեց, զոր չեմք գիտեր որպիսի հոգի մը կրցաւ տուն տալ իրեն։ Մխիթարեանց ու ասոնց կողմնակից ժողովրդեան

դէմ անջնջելի թշնամութեան հոգին զգեցեալ քանի մը դպրոցական մոերիմներուն օգնականութիւնը և ութ ամսական քրտամբը վերջապէս երեւեցաւ այն զօրաւոր ու յաղթական միջոցը։ Ի ատաղերէն լեզուով գրուած սեռական մը որ ոչ անուն ունի ոչ տպարան, իբրեւ սանդարամետական գունդ մը ազգիս մէջ տարածուելով, հրոմէական, էջմիածնական տակն ու վրայ բերաւ, և անհամար չարեաց ու գայթակղութեց պատճառը եղաւ։ Ահաւասիկ այն սոսկալի սեռական, երկու հարիւր տարուան ալոհնոյից առաջին պտուղը, որ եկեղեցական և աշխարհական, այր ու կին, մեծ և պզտիկ, տուն և դպրոց սամենը մէկզմէկու խառնելով իբրեւ անկրօն, սրբիկայ և ապստամբ նախատեր, զրպարտեր ու մատներ էր։ Այս զարմանալի միջոցով Մխիթարեան վանքը պիտի կործանէր, դպրոցները խափանէին, և յետոյ՝ Հայ ազգը իրենց գերին պիտի ըլլար !!!։ Մէհ, անարգ ու գարշելի միջոց . . .։ Երիսուն հազար ութ հարիւր տարուան պատմութեանը մէջ տեսնուած բա՞ն է արդեօք որ հովիւ մը բարեհաճի իր քահանաները և ժողովուրդը այսպէս անխղճաբար զրպարտելու աշխարհի առջեւ։ Ամեն անօրէնութեանց կատարումն է այս, որուն արձագանքը Եւրոպայ սոսկացուց, և ազգը գրգռեց, խռովեց ու ոտք հանեց։ Այս դժոխային գրքին հեղինակները բոլոր ջանքով իրենց բորբոքած

հուրը մարելու և ձեռագործնին աներեւոյթ ը-
նելու տեղ, ընդ հակառակն, կերպ կերպ խորա-
մանկ ստուերեամբ աւելի սաստկացուցին կրակը,
և այսու ամենայնիւ ուղեցին որ ազգը բոլոր զա-
սունք տեսնէ, վնասանայ և ձայն չի հանէ. սակայն
համբերութեան տեղի չէր մնացեր։ Իւր պատի-
ւը պաշտպանելու և ազգը յայտնի կործանումէ
ազատելու համար այս անգամ հաստատ դիտա-
ւորութեամբ մը ոտք ելլելու հարկադրող ժողո-
վուրդը տեսնելով՝ զայրացան այն առաքինի ան-
ձինքը, և վրեժխնդրութեամբ բորբոքեալ, իրենց
պարսաւագրին խմաստները, նախագահին ու
պատրիարքին անուններովը վաւերացած աղերսա-
գիրներու մէջ ամփոփելով՝ Մխիթարեան, ժողո-
վուրդ, աշակերտ ամենը մէկտեղ նոյն զրպար-
տութիւններով Հռոմայ և արքունի դրան ամ-
բաստանեցին։

Այս աղմկեալ վիճակիս առջեւ Հասուն գե-
բապայծառը առանց խօսք մ'արտաբերելու, ա-
ռանց գիր մը հրատարակելու, երկար ատեն ան-
խօսուն հանդիսական կենալէն վերջը, պարսաւա-
գրին հեղինակութիւնը վրայէն նետելու համար
Հռոմ գնաց։ Երկրորդ օրը արդէն պատրաս-
տուած կոնդակովը խմաց տուաւ ժողովրդեան
թէ ազգիս բարեկարգութիւն մը տալու համար
ըրեր է իւր ճամբորդութիւնը։ Առաջին երկու
Նախագահները ոչ տարին մէյմը Հռոմ կը դի-
մէին և ոչ Պարնապս քարտուղարին յարատեւ

նեղութիւն մը կուտային անհամար կնդակներ դրելու, և սակայն խիստ հանդիստ էր ազգը, և բարեկարգ վիճակը։ Իսկ հիմա բոլոր այս երթեւեկութիւններէն ու այն անթիւ թուղթերէն, որոնց գուցէ Ս. Հայրապետը տեղեակ չէ, ուրիշ բան մը չեմք տեսներ բայց երթէ անվերջանալի թշնամութիւն և խռովութիւն և վնաս։ Գերապայծառին ընելու ամենէն աղէկ կարգադրութիւնը կարծեմք իւր Հռոմ մնալն էր. մի, ան ժամանակը անշուշտ ամեն անկարգութիւններէ կ'ազատէր ազգը։ Գ. ժբաղդաբար ասոր հակառակը պատահեցաւ։ Քանի մը ամիս Հռոմ մնալով Հասուն գերապայծառը, Յոնսինեօր Հիլերօին հետ ունեցած տարաձայնութիւնը, բարեկամի մը միջնորդութեամբ, պայմանելէն վերջը հնարք գտաւ դարձեալ Պոլիս դառնալու։ Բայց Իտալերէն դրքին վերաբերեալ ոչ յիշեալ երկու եպիսկոպոսաց հրատարակած թուղթերը նոր բան մը սորվեցուցին մեզի, և ոչ գերապայծառը Ս. Հայրապետին կրնամնէ նոյն դրքին վերաբերեալ կնդակ մը ցուցուց մեզի. այլ ինչպէս գացեր էր նոյնպէս վերադարձաւ, վասն որոյ և ժողովուրդը աւելի հաստատուեցաւ իր առջի ուղիղ գաղափարին մէջ։

Գերապայծառին ճամբորդութենէն քիչ մ'առաջ, Սելվիեան պատրիարքին կողմնապահ ընթացքէն դժգոհ ժողովրդեան արդար փափաքին համեմատ, հրաման ըրաւ վեհափառ Կայսրը

փոխելու նոյն Պատրիարքը։ Նոր Պատրիարքին ընտրութիւնը, որ միայն ժողովրդեան իրաւունքն է, խափանելու՝ և իրեն կողմնակից անձնաւորութ անձ մը ընտրելու համար գերապայծառին ըրած ժողովքները, տուած նեղութիւնները, աւագանւոյն ընտրութիւնը աւրելու ջանքը և պատճառած գայթակղութիւնները նկարագրել խիստ երկար կ'ըլլայ. մինչեւ ժողովրդեան ամեն ճարը հատնելով ստիպուեցաւ կրկին անգամ վերհափառ Ազգային դիմելով արգիլել այն անձնաւորութին ընտրութիւնը։ Վերջապէս Անտոնեան միաբանութենէն Գէր. Կարոն վարդապետը պատրիարք որոշուելով ազգային ժողովքը և կանոնները հաստատելու ձեռք զարկաւ։ Այս միջոցիս գերապայծառը Հռոմ էր. բայց հոս գլուխ նուողը փոխանորդը նոյնպէս հակառակ ազգային բարեկարգութեանց, իւր մեծաւորին հրամանովը ընդդիմացաւ կանոնաց հաստատութեանը։ Օրէնսդրաց ու գերապայծառին մէջ եղած տարաձայնութիւնը երեք գլխաւոր կանոնաց վրայ էր։ Նախագահին ընտրութիւնը, եկեղեցեաց ու ազգային ամեն սեփհականութեանց հաշիւը, և կոակաց կառարիլը. ասոնք են այն երեք կանոնները, ժողովրդեան անհերքելի իրաւանցը և օրինաց հիմունքը, զորոնք գերապայծառը անիրաւաբար միշտ իրեն սեփհականելով՝ և ազգին, ինչպէս ուրիշ հեղ՝ նոյնպէս և այս անգամ հակառակեցաւ ու գրգռեց իւր կողմ

նակիցները, համոզեց զանոնք, և վերջապէս չեմք գիտեր ինչ միջոցներով նոր Պատրիարքը վախցուց որով ժողովքն ալ դարձեալ ցրուեցաւ։

Ժողովրդեան համբերութիւնը թէպէտ շատոնց անցեր էր զչափը՝ սակայն գերապայծառին Հռոմ մնալուն վրայ պզտի ակնկալութիւն մ'ունենալով սպասեց մինչեւ այն օրը որ՝ ամեն յոյսէ զրկուելով՝ հարկադրեցաւ ալ համբերութեան քողքը բոլորովին վարատելու։

Ժողովրդեան ակնկալութեանը դէմ գերապայծառին դարձը՝ ազգիս ներկայ վիճակին ու ապագայ աղետիցը տխուր յիշատակը սաստկացընելով՝ արդէն խռովեալ երեւակայութիւնները այնպէս տակն ու վրայ ըրաւ՝ որ ամենը մեկէն գերապայծառէն երես դարձուց։ Պայթակղեալ անոր ամէն գործքերէն և յուսահատեալ անոր ամեն ուղղութենէն վերջապէս միաբան որոշեց ժողովուրդը որ այսուհետեւ չընդունիր երբէք զՀասուն գերապայծառը իբրեւ իրեն հովիւ և առաջնորդ, և այս անդարձ որոշումը հրատարակութեամբ հաստատեց։ Այսպէս է ժողովրդեան եօթը տարեկան համբերութեանը վախճանը։ Այս որոշումը ընող ժողովուրդը ազգային բազմութեանը երեք քառորդն է և բնիկ մայրաքաղաքացի, ընտիր ընտանիք ու քաղքիս ամենէն կիրթ ժողովրդոցը մէկը, որուն յարեալ են աւագանիին խիստ մեծ ու երեւելի մասը։ Բոլոր ասոնք ստորագրութեամբ ստուգած են։

Իսկ ընդ հակառակն Հասուն գերապայծառին հաւատարիմ կողմնակիցները որոնք են և ինչպէս մարդիկ, բայց 'ի քանի մը ընտանիքներէ, ուրիշ երեւելի մէկը չեմք ճանչնար բայց եթէ Ժողովրդեան դէմ Աբքային աղերսագիր տալու համար պալատին առջեւ ժողովուած ամբոխը, և այն խուժանը որ, ինչպէս ականատեսք կը հաստատեն, սրոք և բրոք հրաւիրեալ էր օր մը Յիսուս Փրկիչ՝ այն հռչակաւոր ձայնաւոր պատարագին ներկայանալու որ Հռոմէն դառնալէն վերջը մատոյց գերապայծառը գուցէ Հռոմայ մէջ ձեռք բերած յաղթութիւնը տօնախմբելու համար, և վերջը պատիւ ունեցաւ նոյն հանդէսով մինչեւ իւր բնակարանը երթալ։ Այս շքեղ հանդէսին համբաւը անշուշտ տեւէ պիսի դարէ 'ի դար 'ի գովեստ Հասուն գերապայծառին։

Աղէկս որոշումը ամենեւին չաղդեց գերապայծառին. չի յիշեց այն որ Ժողովրդեան ձայնը Աստուծոյ ձայն է, որուն առջեւ ամեն բռնուելիկը խորտակի. այլ ազդիս խիստ մեծ մասին իրմէ երես դարձնելը յայտնի տեսնելով, Ժողովրդեան խաղաղութեանը համար աչէնէ, գոնէ քրիստոնէութեան սիրոյն և եպիսկոպոսական պաշտօնին պատուոյն համար ըլլայ իսկոյն այն աթոռէն հրաժարելու տեղ՝ ընդհակառակն՝ թշնամութիւնը աւելցնելով Ժողովրդեան վրայ կրկին զրպարտութիւններ թափելու պատճառանք

մը գտաւ։ Ազգային վերայիշեալ որոշումը հրատարակուելէն վերջը, Ժողովրդէն քանի մը անձինք առանց ձայնի և առանց աղմուկի եկեղեցեաց աւանդատուններէն վերուցին այն կախուած թուղթերը որ Հասուն գերապայծառին անունը և կարգադրութիւնները պարունակելով Ժողովրդեան գայթակղութեանը առիթ մը եղած էին։ Այս գործը չափազանց ստութեամբ մեծցնելով հակառակորդք, քսանի չափ անձանց անունը, անմեղ կամ յանցաւոր առանց զանազանելու, տերութեան ամբաստանեցին։ Արդարադատ տերութիւնը արդէն ծանօթ ասոնց զրպարտիչ բնաւորութեանը, քննեց պատահարը, և ճշմարիտը ստուգելով նոյն պատիւը բրաւ իրենց ամբաստանութեանցը ինչ որ բրեր էր մինչեւ ցայսօր։ Այս ամբաստանութիւնը ամեն զրպարտութեանց վախճանը եղաւ։

Այսպէս է բոլոր այն դէպքերուն ճշմարիտ նկարագրութիւնը որ եօթը տարիէ 'ի վեր գրուեցին, խռովեցին, վնասեցին զժողովուրդը և վերջապէս հարկադրեցին, հաստատ ու անփոփոխելի կերպով, բաժնուելու Հասուն Գերապայծառէն, վասն զի ամ ժողովուրդն ալ ձանձրացաւ, աւադանին ալ, ճշմարիտ գղերն ալ. և զզուեցան, խորշեցան բոլոր այն դաս մը մարդիկներէն որ հարիւր յիսուն տարիէ 'ի վեր անհաշտ թշնամութեամբ Մխիթարայ վանքը կործանելու և հայ ազգը ոչնչացնելու զինեալ՝ ոչ

ազգիս յարատև խեղճութիւններէն սոսկացին, և ոչ բոլոր Եւրոպիոյ կշտամբանքներէն ամչցան։ Հերետիկոսութիւն, ապստամբութիւն, այսպէս է իրենց հինաւուրց զէնքը որ ոչ կը մաշին և ոչ կը խորտակին։ Մէկ ու կէս դար առաջ, այս խուվարար մարդկանց առջև հերետիկոս էին Մխիթարեանք. անկից 'ի վեր գուցէ քառասուն դատ վաստակեցան Հռոմայ մէջ, նոյնչափ ալ կոնդակներ առին զանազան պապերէն իրենց ուղղափառութեանը վկայ. նոյն հաւատքին համար աքսորեցան. նոյն կրօնը պաշտպանելու համար այնչափ գրքեր հանեցին. պատրիարքներէ, եպիսկոպոսներէ, նախագահներէ վկայագիրներ ստացան, և այսօր դարձեալ հերետիկոս են Մխիթարեանք այն քանի մը անխեղճ մարդկանց առջև։ Սակայն վասն սիրոյն Աստուծոյ թող ըսեն մեզի. այնչափ Ս. Պապերը և սուրբ ժողովքները սո՞ւտ են, մեր ազգին նախագահից և Իտալիոյ բոլոր գրքերին վկայագիրները սո՞ւտ են. Մխիթարեանց այնչափ գրքերը, իրենց ամեն աշակերտները սո՞ւտ են։ Կամ բոլոր ասոնք սուտ են և խաբեբայ կամ հակառակորդք։ Ասոնց ո՞ր մը հաւատանք, ի՞նչ պատասխան տան պիտի մեզի այն ուղղափառ անուն ունեցող անձինքը։ Ա՛հ, թէ որ իրենք կը դժուարանան պատասխանելու, մենք կը պատասխանենք։ Զի. ոչ Հռոմ սուտ կրնայ ըլլալ որ այսչափ անգամ զՄխիթարեանները քննեց, ոչ մեր երկու առաքի-

նի նախագահները որ այնչափ զՄխիթարեանները կը սիրէին. ոչ Իտալիոյ գղերը որ Մխիթարեանց քովն է միշտ և կը յարգէ զիրենք. այլ, ներեն մեզի, ասոնց թշնամիներն են սուտ և խաբեբայ մարդիկ։ Այսպէս պէտք է ճանչնայ զիրենք բոլոր աշխարհ. այսպէս կը հաստատենք և մենք. նախ՝ վասն զի նոյն հաւատքը սորվեր ենք Մխիթարեաններէն ինչ որ Հռոմ կ'ուսուցանէ, ինչ որ քրիստոնէական վարդապետութիւնը կը պարունակէ, և ոչ թէ ուրիշ հաւատք մը։ Երկրորդ՝ վասն զի անոնք նոյնպէս կը զրպարտեն և զմեզ իբրև անկրօն, որ գոհութիւն Աստուծոյ, իրենցմէ աւելի, և շատ աւելի, հաւատք ու օրէնք ունինք։ Իրենք ալ գիտեն անշուշտ Մխիթարեանց որչափ ուղղափառ ըլլալը. բայց այն բարերար վանքը խափանելու համար սուտ լրաւ միջոց մը պէտք է համոզելու ժողովուրդը և խորշեցնելու այն Միաբանութենէն որպէս զի յետոյ իրենց կողոպուտը ըլլայ ազգը։ Ահաւասիկ բոլոր պատճառը։ Նախանձ ու թշնամութիւն և ոչ ուրիշ բան։ Սակայն 'ի զուր կ'աշխատին այն խեղճերը։ Մխիթարեաններէն բաժնուելով որոնք պիտի երթայ ժողովուրդը. իրենց, բայց երկու հարիւր տարիէ 'ի վեր ինչ օգուտ ըրած են ազգին. ցուցընեն։ Ո՞ր է իրենց գիրքերը, ո՞ր իրենց դպրոցները, ո՞ր իրենց աշակերտները. ո՞ր իրենց ուսումնականութիւնը, ո՞ր իրենց բարեկրօն ու կիրթ ընթացքը։ Ասոնց

մէ և ոչ մէկը կը տեսնեմք մենք։ Ընդ հակառակը՝ ատելութիւն ուսումնականութեան, ատելութիւն դպրոցներու, ատելութիւն հայութեան, ատելութիւն ազգային յառաջադիմութեան, վերջապէս հանապազորդ թշնամութիւն մը և կերպ կերպ դայթակղութիւն. ահաւասիկ ամէն տեսածնիս։ Միթէ այս միջոցներով պիտի համոզեն մեզ։ Ո՛չ. գլխոյն մէջ քիչ մը խելք ու սրտին մէջ քիչ մը ազգասիրութիւն և մարդասիրութիւն ունեցող մարդը չի հեաւելիր անոնց ձայնին, և ոչ երբէք կը բաժնուի այն Անաբանութենէն որ ազգիս մխիթարութիւն է և պարծանքը. որուն բարոյական և ուսումնական մեծ մեծ օգուտները ոչ ոք կրնայ ուրանալ. որ պապերէ, թագաւորներէ և մինչև Սեծն Նաբուլեօնէն անգամ պատիւ գտաւ, և որուն վրայ հարիւր յիսուն տարիէ ՝ի վեր Օսմանեան դրօշակը կը փառաւորուի։

Այսպէս են երկու կողմանք, որոնց մէկը օգտակար ու պատիւ եղած է միշտ ազգիս և մէկալը վնաս ու նախատինք։

Արդարև կը ցաւիմք այն անձանց վրայ որ տգիտութեան թանձր խաւարովը պատած կարողութիւն չունին դեռ զանազանելու ազգիս թշնամիները և բարեկամները, և որոշելու իրենց վնասը և օգուտը։ Սակայն կը զարմանամք քանի մը երևելիներուն վրայ, որոնք ազգիս բարերարներուն կողմը բռնելով՝ ժողովրդեան բա-

րեկարգութեանը և յառաջադիմութեանը օգ-
նելու տեղ, ընդհակառակն, գուցէ առանց ա-
ղէկ կշռելու՝ ազգիս թշնամեացը կողմը անցնե-
լով, աւագանւոյն և ժողովրդեան խիստ մեծ և
ընտիր ու խելացի մասին դէմ ազգիս վշտերուն
և կորստեանը օգնական կ'ուզեն ըլլալ։ Ա՞վ է այն
որ չէ զարհուրի և չի խորշի այնպիսի մարդէ մը
որ ազգային կանոնները և օրէնքը ոտքի տակ
կ'առնէ, օրէնսդիրները կը ցրուէ, ժողովքները
կը լուծէ, ընկերութիւնները կը խափանէ,
դպրոցները կը գոցէ, դաստիարակները կը հա-
լածէ, կիրթ և իմաստուն եկեղեցականները կը
քրշէ ու պաշտօնէ կը զրկէ, ոգէտ ու մոլնե-
ը քովը կը ժողվէ և կը մեծարէ, աշխարհի
առջև իր քահանաները և ժողովուրդը գրքերով
կը նախատէ, կը զրպարտէ ու կը մատնէ, գայ-
թակղական բանիւ, գրով ու գործքով արևելը
եան ամէն ազգաց առջև ուղղափառութեան և
ընդհանուր գղերին մեծ անպատուութիւն կը
պատճառէ, զուր տեղը որը կը դատապարտէ ու
ը կ'արգիլէ որը կը բանադրէ. մէկ խօսքով ազ-
գիս ու հաւատքին պատուհասը կ'ըլլայ։ Այս-
պիսի անձի մը գիտուք կողմնակից ու օգնական ը-
ալու համար ոչ սիրտ ունենալու է մարդ, ոչ խիղճ։
Անթէ այն անձը չէ՞ այս, զոր Եւրոպիոյ իմաս-
տուն եպիսկոպոսունք, վանահայրք, մեծաւորք
և քահանայք, արժանապէս աշխարհի նշաւա-
կեցին. զոր հայ ազգը մերժեց, և որուն պատ-

մութիւնը ապառնի ծնունդը պիտի սոսկացընէ։ Այսպէս է այն մարդը որ բոլոր աշխարհիս մէջ երկու հոգի միայն համաձակեցան գովաբանելու, որոնց մէկը կաշառով գրաւեալ, և ստախօսութեամբ անուանի, և պատարագէն արգիլուած Հռոմ կ'ըսպասէ դեռ, իսկ մէկալը իւր ազգութիւնը ուրացեալ լատինացող քահանայ մը որ Հայութիւնը ձգած ըլլալուն նախատինքը գոնէ լռութեամբ ծածկելու տեղ, ընդհակառակն իւր լատին եկեղեցւոյն մէջ ապաստանած՝ չեմք գիտեր որ ազգին օրէնքովը համաձակեցաւաւագ հինգշաբթի օրով, հայ ազգին աւագանին ու ամբողջ ժողովուրդը քամահրել, և քրիստոնէական հաւատոյն անպատուութիւն ու ընդհանուր ազգի մը նախատինք ըլլող մարդիկը գովաբանել այն ամբիոնին վրայ՝ ուսկից ճշմարտութեան ու առաքինութեան ձայնը միայն պէտք է հնչէ բոլոր աշխարհի։

Ահաւասիկ Հասուն Դերապայծառը բոլոր գովաբանողները ։։։։ Կամ ասոնց հետ միանալով յաւիտեան ազգատեցութեան ու կոպտութեան անունը ստանալ, կամ Աւրոպիոյ և ազգիս գիտուն ու առաքինի մարդկան կողմը անցնելով դարէ 'ի դար ազգասիրութեան ու կրթութեան համբաւը ունենալ։ Այսպէս է խընդիրը։ Ասոնց ո՞րը ընդունելի է. թող ամէն մարդ որոշէ։ Իսկ մենք և ոչ վայրկեան մը անգամ վարանելով շատոնցուընէ ըրած ենք մեր որոշումը

զոր օրինակ կը պատուիրէ մեզ մարդկութեան և երախտագիտութեան օրէնքը։ Մեր սրտին խորերը թափանցեալ օրէնք մըն է այն որ պիտի տեսէ յորդւոց որդի։

Ազգիս եօթը տարեկան համառօտ՝ բայց ըստոյգ նկարագրութիւնը բաւական կը ցուցնէ աշխարհի, ինչու համար խռովեալ է ժողովուրդը և որ կողմն է արդարութիւնը և իրաւունքը։ Այսու ամենայնիւ հակառակորդաց ամեն զըրպարտութիւնը ջնջելով ամեն երկբայութիւն բոլորովին փարատելու համար կը փութանք որոշ կերպով մը ծանուցանել հոս ժողովրդեան արդար փափաքն ու նպատակը. որ է

ա. Ազգային ժողովք.

բ. Կանոնադրութիւն.

գ. Բարեկարգ դպրոցներ.

դ. Ազգային եկեղեցեաց իրաւունքներուն, սեփհականութիւններուն, ծախքին և աղքատաց մնտուկներուն համարակալ և կարգադրիչ ըլլալ։

Ե. Եկեղեցականք կոտակի չի խառնուիլ։

զ. Նախագահին ընտրութիւնը դղերէն և աշխարհականներէն ըլլալ, ժողովքով և քուէարկութեամբ.

Է. Ամէն կրօնաւոր եկեղեցականաց ազատութիւն իրենց հայրենիքը դառնալու.

ը. Հայկական լեզուին ու արարողութեանց պահպանութիւն, առանց լատին ծէսերու.

Թ. Իտալերէն պարսաւագրին հեղինակներէն ու ամեն գայթակղեցուցիչ ու ազգիս վնասակար եկեղեցականներէն բաժանում. նոյնպէս և Հասուն Վերապայծառէն. վասն զի իրաւամբ գայթակղած է ժողովուրդը ասոնց վրայ, վասն զի իր եօթը տարուան փորձերը աղէկ համոզեցին զժողովուրդը որ նոյն Վերապայծառով ու իր արբանեակներովը ուրիշ օգուտ մը չի կրնար ուենալ ազգը բայց եթէ յարատև վնաս ու խըռովութիւն և վերջապէս կործանում։

Ասոնք են ահա ժողովրդեան մի միայն փափաքը, զոր անշուշտ Տէրութիւնն ալ կ'ընդունի 'ի սէր ազգիս, Հռոմ ալ կը հաճի 'ի պատիւ քրիստոնէութեան։

Կոստանդնուպոլիս 1 մայիս 1853։

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՔ